ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

13 նոյեմբերի 2013 թվականի N 114-Ա

ք. Հրազդան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Գեղադիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում համալիր ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի ղեկավար - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ,

2) ***Մեղա Բաղդասարյան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3) ***Էմմա Գևորգյան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկանք, ժամկետը՝ յոթ օր:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ